

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԲՈՒԼՂԱՐԵՐԷՆ

Վարդան Գրիգորեան

Սոֆիայի Համալսարանի «Աբ. Կլի- մենտ Օխրիդսկու անուան» հրատարակ- չութիւնը «Գիտութիւն եւ արուեստ» հրատարակչութեան հետ միասին լոյս է ընծայել ակադ. Մկրտիչ Ներսիսեանի խմբագրութեամբ Երեւանի Համալսարանի հրատարակած «Հայ ժողովրդի պատ- մութիւնը հնագոյն ժամանակներից մին- չեւ մեր օրերը» գրքի բուլղարերէն թարգմանութիւնը: Թարգմանութիւնը կատարել է բուլղարահայ ճանաչուած լրագրող եւ թարգմանիչ Յակոբ Օր- մանջեանը:

Յակոբ Օրմանջեանը մեծ աշխատանք է տանում բուլղարական միջավայրում Հայ գրականութեան տարածման ուղ- ղութեամբ: 1973 թ. սկսած մինչեւ հիմա նա բուլղարերէն է թարգմանել եւ Սո- ֆիայում, Պլովդիւում ու Վառնայում հրատարակել դասական ու ժամանակա- կից Հայ գրողների երկու տասնեակից ակելի գրքեր: Դրանց թւում են Բաֆֆու «Սամուէլը», Ստեփան Զորեանի «Մի կեանքի պատմութիւնը», Գուրգէն Մա- հարու «Երիտասարդութեան սեմին» ե- ուզրութիւնը, Սերո Խանզադեանի, Վա- հագն Գրիգորեանի ու այլ գրողների ստեղծագործութիւնները: Յ. Օրմանջեանը եւ նրա դուստր Գայեանէն բուլղարական «Օտեչեստու» հրատարակչութեամբ լոյս է ընծայել Յովհաննէս Թումանեանի, Ղա- զարոս Աղայեանի եւ Աւետիք Իսահա- կեանի հեքիաթների ընտրանին՝ բուլղա- րերէն թարգմանութեամբ: «Քաջ Նա- զար» խորագրով տպագրուած այդ պատ- կերագրող ժողովածուի մէջ տրուած են հեղինակների հակիրճ կենսագրութիւննե-

րը: 1975 թ. Սոֆիայում հրատարակուել էր Յ. Օրմանջեանի եւ լրագրող Կ. Հայ- րապետեանի կազմած ու թարգմանած «Հայկական պատմուածքներ ու նովել- ներ» ժողովածուն, որի մէջ ընդգրկուած էին 53 Հայ գրողների գործերը (Բաֆֆի, Շիրվանզադէ, Ե. Օտեան, Ա. Իսահա- կեան, Դ. Դեմիրճեան եւ այլն): Քսան Հազար տպագրանակով լոյս տեսած այդ գիրքը լաւ ընդունելութիւն գտաւ ընթեր- ցողների մօտ:

Յ. Օրմանջեանը եղել է «Զեմլեդել- չեսկա զնամեա» կենտրոնական թերթի թղթակից, ապա «Երեւան» հայերէն շա- բաթթերթի գլխաւոր խմբագիր: Նա «Իւնեսկոյին» կից Բալկանների միջազ- գային վաւերագրական կենտրոնի գլխա- ւոր մասնագէտներից էր: Այդ կենտրոնի առաջադրանքով նա կազմել, թարգմանել եւ լոյս է ընծայել «Հայ ճանապարհորդ- ները Բալկանների մասին (17-19-րդ դդ.)» արժէքաւոր ժողովածուն:

Յ. Օրմանջեանը վաղուց ցանկություն ունէր «Հայ ժողովրդի պատմութիւնը» ներկայացնել բուլղար ընթերցողներին: Ակադ. Մ. Ներսիսեանը խորհուրդ էր տուել նրան թարգմանութիւնը կատարել գրքի երկրորդ, լրացուած հրատակութիւ- նից: Թարգմանիչը լաւ գիտէր, որ այդ գրքի հեղինակները խորհրդային ժամա- նակաշրջանի պատմութիւնը չէին կարող ճշմարիտ ձեւով շարադրել եւ եղե- լութիւններին տալ օբյեկտիւ գնահակա- կան: Ուստի Մ. Ներսիսեանի Համաձայ- նութեամբ նա պատմութիւնը թարգմանե- լիս գրքի այդ մասերն ամբողջութեամբ բաց է թողել՝ սահմանափակուելով միայն

Հայաստանի առաջին հանրապետութեան պատմութեամբ:

Թարգմանութեան առաջաբանում Յ. Օրմանջեանը նշում է, որ Հայ հեղինակ- ները 5-րդ դարից սկսած իրենց աշխա- տութիւններում գրել են նաեւ Բուլղա- րիայի եւ բուլղարացիների մասին: Բուլ- ղար ընթերցողներին, անշուշտ, կը հետա- քրքրէին այդ նիւթերը, ուստի յենուելով բուլղար գիտնականներ՝ ակադ. Դմիտրի Անգելովի եւ պրոֆ. Վասիլ Գիւզերովի «Հայկական սկզբնաղբիւրները Բուլղա- րիայի միջնադարեան պատմութեան մա- սին» գրքի եւ վերը յիշուած «Հայկական աղբիւրները Բալկանների մասին» աշխա- տութեան վրա, Յ. Օրմանջեանը թարգմա- նութեան 3-րդ եւ 8-րդ գլուխների վեր-

ջում Համապատասխան մեջբերումներ է կատարել նրանցից՝ տալով իր մեկնաբա- նությունները: Այդ լրացումներն ակելի են բարձրացնում թարգմանութեան արժէ- քը եւ հետաքրքիր դարձնում այն բուլ- ղար ընթերցողների համար:

«Հայ ժողովրդի պատմութեան» լոյս ընծայումը բուլղարերէն մի յաջող քայլ է Հայ-բուլղարական գիտական կապերի ամրապնդման գործում: Երախտագի- տութեամբ պէտք է նշել, որ գրքի հրա- տարկութեանն աջակցել են Պլովդիւի «Բարեգործական ընկերութիւնը, ինչպէս «Բարեգործական ընկերութիւնը (ԱՄՆ) եւ Ե- ղիազար Ուզունեանը (Պլովդիւ):